Samsung Innovation Campus | UWC Dilijan College

Together for Tomorrow! Enabling People

# ՍԱՄՍՈՒՆԳԻ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԿԱՄՊՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Համաշխարհային առաջատար տեխնոլոգիական ընկերություն Սամսունգ էլեկտրոնիքսը հիմնադրել է Սամսունգի ինովացիոն կամպուսը UWC Դիլիջանի դպրոցում: Աշխարհի շուրջ 23 երկրում գործող ծրագրի շնորհիվ երիտասարդները ծանոթանում են հիմնական տեխնոլոգիաներին և ձեռք են բերում ՏՏ գործնական գիտելիք և հմտություններ:

Հայաստանում Սամսունգի ինովացիոն կամպուսն առաջարկում է Անդրոիդ բջջային հավելվածների ծրագրավորման դասընթաց: 2022 թ. սեպտեմբերի մեկնարկող ծրագրի հայտադիմումների ընդունումը մեկնարկել է: Կարող են դիմել երիտասարդներ ովքեր հետաքրքրված են ծրագրով:

## ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

14-16 տարեկան

Հետաքրքրություն ՏՀՏ ոլորտում և մաթեմատիկայի լավ իմացություն

Տրամաբանական մտածողություն

Ռուսերենի լավ իմացություն (ուսուցման լեզուն ռուսերենն է)

Անձնական համակարգիչ

Ընդունելությունը կատարվում է առցանց թեստի միջոցով

## ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Խնդրում ենք գրանցվել և առցանց հայտ ներկայացնել https://myitschool.ru/ կայքում

Գրանցվելուց հետո պետք է առցանց թեստ հանձնել: Թեստը հաջողությամբ հանձնելու դեպքում կանցնեք երկրորդ փուլ և կհրավիրվեք առցանց հարցազրույցի: Հարցազրույցի ընթացքում կհայտնենք արդյունքների հրապարակման վերջնաժամկետի մասին

Ուսանողների դիմումների ներկայացման վերջնաժամկետը 2022թ. հունիսի 15-ն է

Ուսուցումը կմեկնարկի 2022թ. սեպտեմբերին

# ԲՋՋԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ԱՆԴՐՈՒԴԻ ՀԱՄԱՐ

## Ծրագրի մասին



- **Ծրագրի տևողությունը** մեկ տարի է 132 ակադեմիական ժամով, որից 122 ժամ դասընթաց շաբաթական 4 ժամ տևողությամբ, 8 ժամ խորհրդատվություն անհատական նախագծերի վերաբերյալ, 2 ժամ անհատական նախագծերի ներկայացում
- Դասերը լինելու են **ռուսերեն լեզվով**
- **Դասերն անցկացվելու** են շաբաթ կամ կիրակի օրերին
- **Դասերն անցկացվելու են UWC Դիլիջանի դպրոցում**՝ Սամսունգի ժամանակակից տեխնիկայով համալրված համակարգչային լաբորատորիայում
- **Ապահովվելու է տրանսպորտ** Տավուշի մարզից, Երևանից, Վանաձորից և Գյումրիից
- Դիմելու վերջնաժամկետը **2022թ.-ի հունիսի 15-ն է**
- **Ծրագիրը բաղկացած է հինգ մասից**՝ Ջավա ծրագրավորման հիմունքներ, Օբյեկտ-կողմնորոշված ծրագրավորման ներածություն, Անդրոիդ հավելվածների ծրագրավորման հիմունքներ, Ալգորիթմներ և տվյալների կառուցվածքներ Ջավա լեզվում, Բջջային հավելվածների սերվերային մասի ծրագրավորման հիմունքներ
- **Ուսուցումն անվճար է:**





### ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ

Հարցերի դեպքում կարող եք գրել **samsungcampus@uwcdilijan.am** էլեկտրոնային հասցեին